

կան զատ զատ ծորակներով¹ . մէկուն մէջէն կազը ներս կըմտնէ , ընդունա-
րանը կըլեցընէ , մէկայլէն դուրս կել-
լէ ու քաղքին մէջ կըտարածուի :

II առարանը երկաթէ երկայն սըն-
տուկի ձեով է . որ մէջի կողմէն կա-
ւէ կամ երկաթէ խողովակ մը ու-
նի , բայց անանկ որ մէկ ծայրը բարձր
կեցած է , մէկալ ծայրը ցած , և եր-
կու ծայրերն ալ սնտուկէն դուրս :
Բարձր ձոթը դրուած է ամանով մը
ձէթ , որ կաթիլ կաթիլ վազելով խո-
ղովակին բարձր կողմէն կամաց կա-
մաց կանցնի դէպ'ի վարի ծայրը . աս
միջոցիս սնտուկին մէջ կրակ վառած
ըլլալով² խողովակն ալ կրակի պէս
տաքցած կըլլայ , և մէջէն անցած ե-
ղը մէկ դիէն կայրի , ածխուտ ջրածին
կազը կելլէ ու խողովակին վարի ծայ-
րէն կանցնի ուրիշ խողովակի մէջ .
հոն կիր դրուած ըլլալով³ կազը անոր
մէջէն անցնելու ատեն կըմաքրուի ,
ու նոյնպիսի խողովակէ մը կերթայ
կըմտնէ մեծ ընդունարանին մէջ :
Եւ կերպով մէկ դիէն կազը կըլեցուի
մեծ ընդունարանին մէջ ու վրայի
ծանր խուփը կամաց կամաց վեր կը-
վերցընէ որչափ որ կրնայ . անկէ ետքը
թէ որ ալ տեղ չըլլայ կազը լեցուե-
լու , պէտք է դադրիլ նոր կազ հանե-
լէն : Իսկ երկրորդ մեծ խողովակն որ
ըսինք , ուրիշ բարակ փողեր⁴ կըբաժ-
նուի , բոլորն ալ երկաթէ . ասոնք
կարգաւ կըթաղեն քաղքի մը գլխա-
ւոր փողոցներուն տակը ինչուան ուր
որ ուզեն . անոնցմէ ալ զանազան բա-
րակ խողովակներով կազը կըհաղոր-
դեն դէպ'ի փողոցներուն ծայրերը ,
նեղ ճամբաներու գլուխները , դէպ'ի
խանութները , տուները , վաճառա-
նոցները , հասարակաց կամ ընկերու-
թեան տեղուանք , և ուրիշ ուր ալ որ
մարդ ուզէ : Աւտի իրիկուան մթն-
նալու ատեն գործատան մէջէն մեծ
ծորակը կըբանան . և որովհետեւ խու-
փը իր ծանրութեամբը վրան կոխած

է , կազը մեծ խողովակէն կելլէ ու
կըտարածուի քաղքին ամէն խողո-
վակներուն մէջ : Եւ ատեն իւրաքան-
չիւր խանութպան կամ տանտէր ճը-
րագով մը կըբռնկցընէ իր խանու-
թին կամ տան մէջի եղած խողովա-
կին ծայրէն ելած կազը :

Եւ է ահա ածխուտ ջրածին կազին
գործածութիւնը , որ իրաւ քաղաք
մը լուսաւորելու համար դժուար ու
սուղ կըլլայ , բայց մէյմը շինելէն
ետքը սգուտն ալ խիստ շատ է . վասն
զի նախ փողոցներու մէջ հասարակ
կանթեղ վառելով որչափ որ եղ կը-
գործածուէր , աս կերպով և ոչ անոր
քառորդը կերթայ . մանաւանդ որ
աղտոտ չգործածուելու եղն ալ կազի
համար խիստ աղէկ կըծառայէ : Արկ-
որդ⁵ ասոր լոյսը ցորեկուան պէս պայ-
ծաւ կըլլայ , իսկ հասարակ ճրագին
բոցը ասոր առջին խաւար է : Արորդ
քանի մը հոգի բաւական է բոլոր քա-
ղաքը կազով լուսաւորելու , որ ա-
ռանց ասոր հարիւրաւոր հոգի բա-
ւական չէին ըլլար , մանաւանդ մեծա-
մեծ քաղաքներու : Չորրորդ⁶ խա-
նութպանին տարեկան ծախքն ալ այն-
չափ է որչափ որ հասարակ եղի կըծա-
խէր . և անոր աղտոտութիւնն ու գար-
շահոտութիւնը կազը ամենեւին չու-
նի : II երջապէս մարդ որչափ անգամ
վայելէ կազին սքանչելի լոյսը , բնալու-
ծութեան ուսմունքին յարգն ալ ա-
ւելի աղէկ կըճաննայ , ու հիմակուան
ուսումնականաց ուրախ սրտով շնոր-
հակալ կըլլայ :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

II ԿԵԼԵՐԻ ԵՂՋԻՐԱՊԵՐ :

II ԱՓԱԺՈՒՐՍՈՒԾ ԿԱՊԻԿՆԵՐԸ շատ
տեսակ կըբաժնուին , ու ամէնն ալ
Եւրոպայի անտառները կըգտնուին .
ասոնց մէկ տեսակն է ԵՂՋԻՐԱՊԵՐ¹ ը-

1 Մոսկովա :

2 Օւլաֆ , պորտ :

1 Գլ . Sapajou կամ Sajou cornu .



Սափաթու եղջերաւոր :

սուածը , որ ճակարին երկու գիւն
գէպ 'ի վեր տնկուած սեւագոյն մա-
զեր ունի : Սեծութիւնը 14 բթա-
չափ է՝ բթին ծայրէն ինչուան պոչին
արմատը . գլուխը երկայնաձև ու մութ
ճերմակ մազերով ծածկած է , քը-
թին ծայրը տափակ , պոչը 12 բը-

թաչափ երկայն , ու անանկ ճկուն
է որ անով ճիւղերէն կը կախուի , ու
զած բաները կը բռնէ և այլն : Արու-
նրկին գոյնը կարմրի կը զարնէ . վզին
ու կունրկին վրայ երկայն բարակ սե-
գիծ մը ունի որ ինչուան պոչը կեր-
թայ : Սրիշ կապիկներու պէս ասի-

կայ ալ աշխոյժ, տգեղ ու վայրենի է. բայց բնութեամբ խիստ անպուծ ու չար չըլլալով՝ դիւրաւ կընտանենայ ու սէր կըձգէ իրեն տիրոջը վրայ՝ թէ որ զինքը աղէկ հոգայ նէ։ Իր ձագը կռնակը առած կըքաղցրնէ, ու ինչուան ետքի շունչը կընայի որ ձագին կեանքը ազատէ թշնամիներու ձեռքէն։ Եւեղձձայն մը ունի լալու պէս, որ աւելի սաստիկ անձրևի կամ փոթորկի մօտ ատեն կըհանէ. անոր համար ոմանք լալան՝ դրած են անունը։ Ի՞նչ տեսակը շատը մէկտեղ կենալ կըսիրէ կըսեն։ () քսմելին անունով ճամբորդը աչքով տեսածի պէս կըպատմէ թէ աս կապիկներէն մէկը թէ որ յանկարծ վիրաւորուի, ուրիշ ընկերները ամէնքը վրան կըժողվին, ու մատուրնին վերքին՝ մէջ կըխոթեն՝ իբր թէ զննելու համար. թէ որ արիւնը շատ վաղէ, ոմանք ձեռքով կըբռնեն վերքին բերանը, ոմանք ալ կերթան շուտ մը ծառի տերեւներ կըբերեն՝ կըծամեն, ու վարպետութեամբ վերքին մէջը կըխոթեն։ () արքերաֆ անունով ճանապարհորդն ալ կըսէ թէ ատեն ատեն, մանաւանդ առաւօտը և իրիկունը, ասոնցմէ մէկը յանկարծ սուր ձայնով մը կըկանչուրուտէ, ու չորս դիէն սափաժուները քովը կըժողվին. ձեռքովը նշան կուտայ որ նստին, անոնք ալ շուտ մը կըհնազանդին կընստին լուծեամբ. մէյմըն ալ ասիկայ ձայն մը կըձգէ անանկ բարձր ու այնպէս խառնակ որ հեռուանց լողը կարծէ թէ ամէնը մէկէն կըկանչուրուտեն։ Երբոր դագրի իր ճառախօսութենէն, նշան կուտայ ձեռքով որ անոնք կանչուրուտեն. անոնք ալ ամէնքը մէկէն սոսկալի աղաղակ մը կըձգեն ու միակերպ կըպողքտան ինչուան որ նորէն նշան տայ. ետքը նորէն ինքը կըկանչուրուտէ, ու մէկալանոնք աս ալ մտիկ ընելէն ետեւ կըցրուին կերթան իրենց տեղը։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

() Ին է առաջին հոգը որ ծնողք պիտի ունենան նոր ծնած պղտն վրայ։

() Երբ առաջին պարտքը աս է որ իրենց զաւկին առողջութեանը վրայ հոգ ունենան. աս պարտքէս շատ անգամ կըպակսին ծնողք, ու չեն գիտեր թէ ինչպէս պէտք է տղաքը աղէկ հոգալ։

() Եկ տղայ մը որ շատ փափուկ կըմեծնայ, բնութեամբ տկար կըլլայ, և ամէն բանէ դիւրաւ կըփասուի. անոր համար ծնողք որչափ կարելի է պիտի ջանան որ տղան առողջ ու աշխոյժ մեծնայ, գիտնալով որ բնութեամբ տկար մարդը աշխատանքի չդիմանար, ու իրեն դատողութիւնն ալ տկար կըլլայ. պզտիկ հեշտութիւնները իրեն աչքին մեծ բան մը կերենան, մանր մուկը նեղութիւններն ալ չդիմացուելու վիշտեր։ Փափուկութեամբ կաւրուին նաև տղոց ախորժակները, որով առանց ընտրողութեան կըխորչին ան բանէն՝ ուսկից պէտք չէր խորչիլ, և կըսիրեն ան բաներն որ պէտք չէր սիրել. ասով կըլլան հեշտասէր, վախկոտ, բարկասիրտ, նեղսիրտ ու անհամբեր։

Տղան քանի որ պզտիկ է՝ պէտք չէ խանձարուրքը կամ բալուլը՝ պինդ կապել. չէ նէ արիւնը չկրնար ինչպէս որ պէտք է երակներուն՝ մէջ համարձակ քալել. անով առողջութեանը փնաս կըլլայ, ոտուրներն ու ձեռուրներն ալ ծուռ կըմեծնան։

() Ետք չէ տաք ատեն տղուն գլուխը գոցել. միայն ձմեռը բարակ լաթով մը ծածկելը բաւական է։ Երբ այնպէս աղէկ բան չէ տղուն գլուխը սխմելը որ մէկ որոշեալ ձև մը առնէ, հապա-